

Թաւրիղից Ս. Էջմիածին վերադարձաւ Սինօղի ան-
դամ տ. Մատթէոս վարդապետը, որն ուղարկուած էր
պատուիրակ առաջնորդական ընտրութեանց համար և նա-
խագահեց Բարդուղիմէոս սրբազանին ընտրող ժողովներին:

Մայիսի 8-ին Մայր Աթոռիցս դնաց հայրենիք՝—Ղա-
րաբաղ՝ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը:

Աքսորից արձակուեցան և վերադարձան Սահակ և
Ղուկաս վարդապետները:

Կազմուեց նոր Վանական կառավարութիւն, որին
նախագահ նշանակուեց տէր Ղևոնդ եպիսկոպոս, իսկ ան-
դամներ—Համազասպ և Տաճատ վարդապետներ:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Ալեկքի մէջ կարգում ենք. ՎԵՏ. Կայսրն, ինչպէս ամեն
տարի, այս տարի այլ բարեհաճած է 50,000 դուրուշ շնորհել
ազգ. Պատրիարքարանի պէտքերուն համար: Կայս. այս բարե-
գթութիւնը Պատրիարքարանի պաշտօնութեան երախտագի-
տութեան և բարեմաղթութեանց անդամ մը ևս առիթ ըլլալով,
ս. Պատրիարքը շնորհակալութեան ուղերձ մը պիտի մատուցանէ
յոտոս դահոյից Ն. Կայսր. Վեհափառութեան:

«Ս. Պատրիարք Հայրը՝ Պատրիարքարանի ընդունելութեան
դահլիճը հին պատրիարքներու պատկերներով զարդարելէն զկնի,
հիմակ ալ հին պատրիարքներու ժողովրդեան ուղղած կոնդակ-
ներէն պատրիարքարան մնացած հազուադէպ օրինակներն
անկորուստ պահելու համար, շրջանակներու մէջ անցընել

կուտայ, ասոնք Կրօնական ժողովոյ գումարման սրահը պիտի դրուին: Այս կոնդակներու մէջ պատմական արժէք ունեցող և գեղեցիկ զարդանկարներով ու ձեռագրերով զրուածներ ալ պակաս չեն:

Նոյն թերթի ապրիլի 11-ի համարում կարգում ենք ի միջի այլոց հետևեալը. —

«Ծաղկազարդի տօնին Պատրիարք Հայրը ճաշուագրքէն վերջ քարոզ մը խօսեցաւ հաղորդութեան և խոստովանանքի նաև ողորմասիրութեան մասին, որ էական մէկ մասը կրկադմէ ճշմարիտ քրիստոնէի կեանքին: Յաջորդաբար անդրադարձաւ այն ամեն եկեղեցիներու մարմիններուն, բարենպաստակ հաստատութիւններուն վրայ, որոնք միայն ժողովրդական նուէրներով՝ այրիի լումաներով կը մատակարարուին: Ս. Պատրիարքը հրաւիրեց ժողովուրդը առատապէս տալ իր նուէրը եկեղեցիին, անոր պաշտօնեաներուն և աղքատախնամներուն, Ազդ. Հիւանդանոցին, Երուսաղէմի վանքին, դաւառի աղքատիկ եկեղեցիներուն, որոնցմէ շատերուն մէջ նոյն իսկ Ս. Պատարագ չի մատուցուիր զգեստի և անօթներու պակասութեան պատճառաւ: Ն. Սրբազանութիւնը ի վերջոյ երկարօրէն խօսեցաւ Մայր Աթոռի արդի կացութեան վրայ, որ, ըսաւ, հազիւ հազ ապրելու վիճակի մը մէջ է: Մայր Աթոռը և իւր միաբանները կը հոգացուն տեղւոյն բարեփոխ անձերու որոշ նուէր — ամսականներով: Այսպէս ըսաւ ս. Պատրիարքը, Ս. Հայրապետը յանձնարարած է? մեզի խնդրելու ձեզմէ, Հայ եկեղեցու զաւակներէդ, չղանալու ձեր ինքնաբուխ նուէրները, քանի որ, մինչև ռուսահայ եկեղեցիներու կալուածներուն վերադարձուիլը, Մայր Աթոռը և իր միաբանութիւնը նիւթական շատ աննպաստ կացութեան մէջ պիտի գտնուին: Սրբազան Պատրիարքը վերջացնելով իր քարոզը, կրկին ու կրկին յորդորեց ժողովուրդը, որ մանաւանդ զատկական օրերուն, երբ ամեն ոք ուրախ տրամադրութեան մէջ կըլլայ, չ'անտեսէ իրեն ներկայացած պնակները:

— Բարոյական պարտք ենք համարում յայտնելու ի գիտութիւն ընթերցողների, որ հայ ժողովուրդը անպարտաճանաչ չի եղել և անտես չի արել Մայր Աթոռի կացութիւնը, իսկապէս տաճկահայք միայն բաւական ձեռնպահ մ'նային և մասնակցութիւն չունեցան իրենց քրիստոնէութեան որորանի նեղ կացութեան բարւոքման խնդրում:

Նոյն թերթի մէջ կարդում ենք.— «Դատական նախարարութեանէն գրուեցաւ երէկ Ատանայի կուսակալութեան, թէ Վեհ. Սուլթանը Կիլիկիոյ ս. Կաթողիկոսին 2250 դրշ. ամսաթոշակ յատկացուցած ըլլալով, տեղւոյն կառավարական սնտուկէն պիտի վճարուի: Կայսերական այս շնորհը նոյնպէս գրաւոր կերպով հաղորդուեցաւ ս. Կաթողիկոսին:

— Պրուսայի Գրիգոր Էֆէնդի Բէքմէդեան, որ Պոլսոյ մէջ իր ունեցած երկու տունը Աղգային հիւանդանոցին կտակած էր ասիէ առաջ, այս անգամ ալ Պրուսայի մէջ իր ունեցած բոլոր կաշուածները կտակած է Պրուսայի եկեղեցիին և անոնց փոխանցումն ալ կատարած է պաշտօնապէս վաճառական Պալապանեան Յակովբ Էֆ. ի անունն:

Արեւելի ապրելի 2-ի համարում կարդում ենք.—

«Ինչպէս կըյիշեն մեր ընթերցողները, Արեւել առաջին անգամ ծանոյց Վեհ. Պօղոս փաշայի մէկ միլիոն ֆրանքի խոշոր նուիրատուութիւնը: Իրական ու անհրաժեշտ պէտք մը գոհացնելու, այն է առևտրական և արհեստագիտական վարժարան մը հաստատելու համար: Այսօր անգամ մըն ալ կըհաստատուի, թէ Վեհ. Պօղոս փաշա ոին ու անդորժագրելի խոստում մը ըրած չէ, այլ հիմակուքնէ դործի ձեռնարկած է եզրկատական թերթերուն նայելով, Պօղոս նուպար փաշա իր ծախքովը նախ վարժարանին շէնքը շինել պիտի տայ՝ համաձայն առողջապահութեան արդի պահանջումներու և տարեկան 2,000 ոսկիի աւակաւ հասոյթ մը պիտի ապահովի այս վարժարանին համար: Հիմա Պօղոս փաշա կըզբաղի այս վարժարանին ուսման ծրագրովը և եւրոպայի մէջ գտնուած նմանօրինակ հաստատութեանց յայտագիրները ըզբել տալէ դատ, որոշած է ինքն ալ այցելել իտալական առևտրական վարժարանները, որոնք իրենց տեսակին մէջ լաւագոյններն են: Վարժարանը պիտի հաստատուի իտալական վարժարանի մը հիման վրայ:

Իզմիրի քաղաքային ժողովը որոշել է մի գեղեցիկ շէրիմ կանգնեցնել նախորդ առաջնորդ Տ. Մելքիսեդէկ Սրբազան Մուրադեանի գերեզմանի վրայ: Հանգուցեալ եպիսկոպոսն իւր կտակագրի մէջ այդ մասին յայտնել է իւր կամքը:

— Սիսից Պատրիարքին հեռագրել են, որ Կիւրինի կաթողիկոսական տեղապահ Տ. Արքահամ եպիսկոպոս Մամիկոնեանը ապրելի 1-ին վախճանուել է:

Հանգուցեալը ծնուած էր Մալկարա 1835-ին և Վարդան անունով վարդապետ ձեռնադրուած 1864-ին: Նախապէս Երուսաղէմի Պաւսեան եղած և Կիպրոսի հոյեոր տեսչի պաշտօն է վարած: Ապա թողնելով Երուսաղէմի միաբանութիւնը, անդամակցած է Սսոյ և Մկրտիչ կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրուած: Հանգուցեալը վարել է Եօղդատի տեղապահութեան պաշտօնը, գնացած է Պօլիս և Թոբիգափու և Սամաթիոյ ձէնի Մահալէի քարոզչութեան պաշտօն է վարել, ինչպէս և եպիսկոպոս ժամանակ, Պօլիս դալով, եղած է Գումգափուի քարոզիչ, Տ. Արքահամ եպիսկոպոսը 1895-ին կրօնական ժողովի որոշմամբ՝ Գաղանձեան և Նիկողայոս եպիսկոպոսները ու մի կարգաւոյժ վարդապետի հետ զրկուած էր եկեղեցական պաշտօն վարելու արտօնութիւնից, որից յետոյ իւր միւս ընկերները մեղայական տալով, կրկին ընդունած էին եկեղեցու մէջ, իսկ հանգուցեալը յամառեցաւ և 6—7 տարի պատարագելու իրաւունքից զուրկ մնաց: Արժանաւորվ Կիլիկիոյ ներկայ Կաթողիկոսի կողմից ներման, նշանակուեց Կիւրինի կաթողիկոսական տեղապահ, որտեղ և մեռաւ կարճ պաշտօնավարութիւնից յետոյ:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Церк. Вѣстник-ի № 13-ում կարգում ենք Ս. Պետերբուրգի հոգևոր ձեմարանի տեսուչ Սերգիի եպիսկոպոսի հետեւալ տողերը.—

«Ներկայումս զրուած և կարելի է ասել, որ արդէն վճռուած է խղճի ազատութեան վերաբերեալ հարցը: Այսուհետև Ռուսաստանի հպատակ և քաղաքացիապէս չափահաս իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի ոչ միայն անտարբեր լինելու գէպի հաւատն ու նրա համար ընտանական պրաւօտլաւ եկեղեցու կանոնները, այլ և պաշտօնապէս անցնելու իւր դաւանութիւնից մի ուրիշը (առ այժմս կարծեմ թոյլ է տրուում փոխուել մի միայն քրիստոնէական մի դաւանութիւնից միւսը, որպիսի սահմանափակումն անշուշտ կը վերացուի ապագայում՝ որպէս անհետեւողական):